

9.

ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
PHILOSOPHY
ФИЛОСОФСКИЕ НАУКИ

ՀԵԳԵԼԻ ԵՎ Կ. ՄԱՐԶՍԻ ՀԻՍՏՈՐԻՑԻԶՄԸ
ԸՍՏ Կ. ՊՈՊԵՐԻ

Հ. Գ. ՂԱԶՈՅԱՆ

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ պրոֆեսոր*

Կ. Պոպերը «Բաց հասարակությունն ու նրա թշնամիները» երկհատոր աշխատության մեջ նշում է՝ «Հետամուտ լինելով հիստորիոգիգի ընթացքին՝ պարզեցի, որ պատմական մարգարեության այդ վտանգավոր սովորությունը, ինչն այնքան տարածված է մեր ինտելեկտուալ առաջնորդների մեջ ...միշտ շոյում է դրա հետևորդների այն զգացմունքը, թե ինքը պատկանում է նվիրյալների ներփակ մի շրջանի ու տիրապետում է պատմության ընթացքը կանխագուշակելու արատավոր զորությունը»¹։ Այս տեսանկյունից ելնելով՝ նա քննադատում է Պլատոնին, Հեգելին և Մարքսին ու մեղադրում նրանց հիստորիոգիգի մեջ։ Այս հոդվածում վերլուծելու ենք Հեգելի և Մարքսի հիստորիոգիգի Պոպերյան ընթերցումը։ Նախ՝ Պոպերը իրավացիորեն նշում է Հեգելի ներդրումը պատմական երևույթների վերհանման ու բացատրման գործում։ Հեգելը նկատել ու վերհանել է պատմական այն դրամայի մեծությունն ու վիթխարիությունը, որ հետաքրքրություն է հաղորդում պատմությանը։ Հեգելի կողմից կատարած վիթխարի ընդհանրացումները, պատմական ժամանակաշրջանների բաժանումն ու մեկնաբանությունները հմայել են պատմաբաններից շատերին և անգամ ստիպել վերջիններիս մանրամասն ուսումնասիրություններ կատարել, մի խոսքով՝ Պոպերը համոզված է, որ Հեգելը յուրահատուկ դեր է խաղացել պատմությունը պրոպագանդելու գործում, ուստի նշում է. «Իմ կարծիքով պատմաբանները Հեգելին գնահատում են (եթե, իհարկե, գնահատում են) որպես փիլիսոփայի, իսկ փիլիսոփաներն էլ հավատում, որ Հեգելի վաստակը (եթե սա կա, իհարկե) պատմությանը հասկանալուն է վերաբերվում»²։

Պոպերը Հեգելի փիլիսոփայության մեջ կարևոր ու անառարկելի մի գաղափար է առանձնացնում, և դա «...վերացական այն ռացիոնալիզմին ու ինտելեկտուալիզմին հակառակվելու գաղափարն է, որը չի ընդունում բանականության

¹ Կ. Պոպեր, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 1, Եր., 2001թ., էջ 54։

² Կ. Պոպեր, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ., էջ 61։

կախվածությունն ավանդույթից: Սա այն փաստի գիտակցելն է... թե անհմար է, որ մարդը չեղած տեղից մտքերի մի աշխարհ ստեղծի: Հակառակը՝ մարդու մտքերը մեծ մասամբ ինտելեկտուալ ժառանգության արդյունք են»³:

Պոպերը այն կարծիքին է, որ դիլեկտիկական համարձակ խարդախությամբ Հեգելը գոյություն է ռացիոնալիզմը և անգամ այնքան ճոռոմ է գովաբանում բանականությունը, որ նման բան երբևիցե չեն արել ոչ իրենից առաջ, ոչ էլ հետո, բայց հետաքրքիրն այն է, որ խոսքը վերջանում է իռացիոնալիզմով: Իբրև դրա ապացույց՝ Պոպերը շեշտում է Հեգելի հետևյալ միտքը. «Համաշխարհային պատմությունը երջանկության թատերաբեմն է: Սրա մեջ երջանկության էջերը դատարկ են, քանզի սրանք ներդաշնակության էջեր են»⁴: Պոպերի վկայությամբ Հեգելի ամենասիրած թեմաներից մեկը «Համաշխարհային Պատմական Անհատի» գաղափարն է: Դեպքերը, իրադարձությունները, երևույթները քննվում են հասարակության մեջ և ձևավորվում է հասարակական կարծիքը, իսկ այդ հասարակական կարծիքը կարող է ամեն ինչ համարել սխալ ու միևնույն ժամանակ ճիշտ: Իսկ ու՞մ է վերապահված պարզելու ճշմարտության իրավունքը: Հեգելը գտնում է, որ այդ իրավունքը պատկանում է Մեծ մարդուն: Այս առումով Պոպերը հետևյալ կերպ է մեկնաբանում Հեգելի տեսությունը. «Իր ժամանակի Մեծ մարդն այն մարդն է, ով իր ժամանակի կամքն է արտահայտում, ով գիտե, թե այդ ժամանակն ինչ է ուզում, ու ով իրագործում է այդ ուզածը»⁵: Այդ Մեծ Մարդը գործում է ըստ իր ժամանակի ներքին ոգու և իրագործում է դրանք: Այդ դեպքում հարց է ծագում, ինչպե՞ս համատեղել հասարակական կարծիքն ու Մեծ Մարդու ցանկությունն ու կամքը: Պոպերի մեկնաբանությամբ Հեգելը այսպես է լուծում այդ հարցը. «... այն մարդը, ով չի հասկանում, թե այս կամ այն հասարակական կարծիքն ինչպես արհամարի, երբեք էլ ոչ մի վսեմ բան չի անի»⁶: Այս մարդիկ հաշվի չեն նստում հասարակական կարծիքի հետ: Սրանք գործնական մարդիկ են, քաղաքականությամբ զբաղվող, ներքուստ գիտեն իրենց օրերի պահանջը, պատկերացնում են ինչ ուղղությամբ է ընթանալու զարգացումը, սրանք իրենց դարաշրջանի հերոսներն են: Պոպերն այն կարծիքին է, որ, ըստ Հեգելի, սրանք անպայման պետք է համարվեն պայծառատեսներ: Սրանց և գործերը, և մտքերը իրենց ժամանակի լավագույնն են: Մյուս մարդիկ սրանցից պետք է սովորեն, որովհետև սրանք առաջնորդներ են, միևնույն ժամանակ՝ հետևեն սրանց: Մեծ մարդիկ ոչ միայն զորավոր իմացություն ու իմաստություն ունեն, այլև «Մեծ Կրքերի Տեր» մարդիկ են: Իսկ ի՞նչ վտանգավոր բան է տեսնում Պոպերն այստեղ. այն, որ «Մեծ մարդիկ իրենց նպատակներն իրագործում են հենց իրենց բավարարելու համար (և ոչ ուրիշների)... Աշխարհում ոչ մի մեծ բան առանց կրքի չի իրագործվի»⁷: Պոպերը, հետևելով Հեգելյան բառապաշարին, սա համարում է «Բանականության նենգություն», այսինքն բանականությունն ստիպում է, որ կրքերն աշ-

³ Նույն տեղում:

⁴ Կ. Պոպեր, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ., էջ 71-76:

⁵ Կ. Պոպեր, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ., էջ 74:

⁶ Նույն տեղում:

⁷ Կ. Պոպեր, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ., էջ 75:

խատեն իր օգտին: Թերևս Պոպերը միաժամանակ խոստովանում է, որ իր ցանկացածը արտահայտելու համար կիրք բառը այնքան էլ հարմար չէ, բայց դրանից ավելի հարմարն էլ չի գտել: Այնուհետև Պոպերը փորձում է հիմնավորել կրքերի վտանգավորությունը և դա տեսնում է նրանում, որ կրքերն այնքան զորավոր են, որ խախտում են բարոյականության ու արդարության սահմանները: Անցում կատարելով Մարքսին՝ Պոպերը պահպանում է պատմական արդարացիության սկզբունքը, նախ անդրադառնալով նրա ապրած ժամանակահատվածին նշում է, որ «Մարքսի ժամանակների տնտեսության սարսափելի նկարագրությունը չափազանց ճիշտ է: Բայց Մարքսի այն օրենքը, թե հարստություն կուտակելուն զուգընթաց թշվառությունն անպայման աճում է՝ ճիշտ չէ»⁸: Անընդհատ աճող թշվառության օրենքը Մարքսը համարում է հասուն կապիտալիզմի օրենքը, Պոպերը դա համարում է վաղ կապիտալիզմի թերությունը: Պոպերն այն կարծիքին է, որ Մարքսից հետո արտադրության միջոցներն այն աստիճան են կուտակվել, իսկ աշխատանքի արտադրողականությունն էլ այնքան է աճել, որ Մարքսը դժվար թե այդ պատկերացներ: Մարքսն այն կարծիքին էր, որ ինչքան հասարակության, մի բևեռում աճի հարստությունը, մյուս բևեռում այնքան կմեծանա աղքատությունը, իսկ Պոպերն, ուսումնասիրելով իր ապրած ժամանակների հասարակությանը, պնդում է, որ Մարքսի կանխատեսումները ճիշտ չէին, կապիտալիզմը գնում է թշվառությունը մեղմելու, միաժամանակ կանանց ու երեխաներին շահագործելուց ձերբազատելուն:

Մարքսը, իսկ հետագայում էլ նրան հետևող կոմունիստները համոզված էին, որ թշվառությունը, աղքատությունը կաճի, ուստի բանվորների վստահությունը ձեռք բերելու համար պետք է պայքարեին ի օգուտ բանվորների և սա կոմունիստների տակտիկական գլխավոր քայլն էր: Այս առումով Պոպերը նշում է. «Մարքսի մարգարեության շնորհիվ կոմունիստները հաստատ գիտեին, որ թշվառությունը շուտով անպայման կաճի: Ու նաև գիտեին, որ կուսակցությունը բանվորների վստահությունը ձեռք չի բերի, եթե չպայքարի բանվորների օգտին ու բանվորների հետ միասին՝ հանուն նրանց վիճակը լավացնելու»⁹:

Պոպերը Մարքսի ժամանակների կապիտալիզմը որակում է որպես «անզուսպ կապիտալիզմ» և գտնում է, որ այդ կապիտալիզմը այլևս չկա: Մարքսի ապրած ժամանակներից հետո «դեմոկրատական ինտերվենցիոնիզմը վիթխարի քայլերով է առաջացել, ու աճող արտադրողականությունը հնարավոր է դարձրել, որ աղքատությունը ըստ էության վերանա»¹⁰:

Պոպերը նկատել է, որ Մարքսը իր ապրած ժամանակների պայմանները լավ էր զգում, ուստի գտնում է, որ նա սոցիոլոգիական սուր հոտառություն ուներ: Չի անտեսում և այն, որ «... աննկուն հումանիստ էր ու օժտված էր արդարության անընկճելի զգացումներով»¹¹:

Քննելով Մարքսի ուսմունքը բարոյագիտական տեսանկյունից, այն որակում է նաև որպես բարոյագիտական հիստորիցիզմ և գրում, որ նրա տեսությունը «...

⁸ **Կ. Պոպեր**, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ., էջ 180:

⁹ **Կ. Պոպեր**, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ., էջ 183:

¹⁰ **Կ. Պոպեր**, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ., էջ 180:

¹¹ **Կ. Պոպեր**, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ., էջ 118:

ոչ թե գիտական դատողության, այլ բարոյական պոռթկման արդյունք է, կեղեքվածներին օգնելու ցանկություն ... հենց այս ցանկությունն է Մարքսին հասցրել սոցիալիզմին»¹²: Ըստ Պոպերի՝ Մարքսի ուսմունքի ազդեցության գաղտնիքը հենց բարոյական այս կոչն ու հրապույրն էր, մինչդեռ Մարքսի հետևորդ մարքսիստները պնդում են, որ Մարքսը բարոյականությունը վերացական ձևով չէր քարոզում: Այնուամենայնիվ Պոպերը մնում է այն կարծիքին, որ Մարքսի լավատեսությունը «... ստիպել է նրան իր բարոյական հավատամքը քողարկելու հիստորիցիստական ձևակերպումներով»¹³:

Պոպերը իր աշխատության մեջ հիշատակում է նաև «Թեգիսներ Ֆոյերբախի մասին» աշխատությունը, հատկապես շեշտադրում է այն թեզիսը, որում նշված է՝ «Փիլիսոփաները միայն աշխարհն են մեկնաբանել տարբեր ձևերով, բայց հարցը աշխարհը փոխելն է», այն համարելով ակտիվիստական մոտեցում: Այնուհետև փորձում է համոզել, որ ակտիվիզմը բախվում է հիստերոցիզմին՝ գրելով՝ «Մարքսի ակտիվիզմի ու հիստերոցիզմի միջև մի խոր անդունդ կա ու այդ անդունդն ավելի է խորացնում իր այն դոկտրինը, թե պիտի անպայման հնազանդվենք պատմության իռացիոնալ ուժերին»¹⁴: Պոպերը իրավացիորեն նկատել է նաև, որ ապագան կանխատեսելու նախկին բոլոր ծրագրերը Մարքսը որակել է որպես ուտոպիական:

Մարգարեության մասին, դեռևս Պոպերից առաջ, նշել է Է. Կասիրերը իր «Էսսե մարդու մասին» գրքում, որը բավականին հետաքրքիր է և ցանականում ենք գուգահեռներ անցկացնել: Կասիրերը իրավացիորեն նկատում է, որ դեռևս հին ժամանակներում մարդիկ ապագան չեն ըմբռնել որպես սոսկ պատկեր, այն դառնում է «իդեալ», որ մարդու պատկերացրած ապագան ընդգրկում է լայն ոլորտ: Ըստ Կասիրերի՝ դա «...մարդու խորհրդանշային ապագան է, որը համընկնում և սերտորեն համապատասխանում է նրա խորհրդանշային անցյալին: Մենք այն կարող ենք կոչել «մարգարեական» ապագա...»¹⁵: Նման ապագայի մասին գրել ու խոսել են կրոնական գործիչները, որոնք երբեք չեն բավարարել սոսկ կանխատեսելով գալիք դեպքերը, որոնք գուշակներ չէին, ունեին այլ նպատակ, քան գուշակները, և Կասիրերը գրում է. «Ապագան, որի մասին նրանք խոսում էին, էմպիրիկ փաստ չէր, այլ բարոյական ու կրոնական խնդիր: Այդ պատճառով կանխատեսումը վերափոխվեց մարգարեության: Մարգարեությունը չի նշանակում պարզ կանխատեսում, այն նշանակում է խոստում»¹⁶: Կ. Պոպերը ևս մարգարե տերմինի տակ նկատի ունի ավելի քան խոստումը, քան պարզ գուշակությունը:

Այսպիսով, ի՞նչ նկատի ունի Պոպերը, երբ խոսում է պատմության հիստորիցիստական մեկնաբանման մասին: Ըստ նրա չկա անցյալի այնպիսի պատմություն, ինչն իրոք տեղի ունեցած լինի: Կան միայն պատմական մեկնաբանություններ, որոնցից ոչ մեկն էլ վերջնական չէ: Կգան մոր սերունդներ, որոնք

¹² Կ. Պոպեր, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ., էջ 199:

¹³ Կ. Պոպեր, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ., էջ 200:

¹⁴ Կ. Պոպեր, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ., էջ 195:

¹⁵ Է. Կասիրեր, «Էսսե մարդու մասին», Եր., 2010, էջ 87:

¹⁶ Նույն տեղում:

պատմությունը կմեկնաբանեն նոր ձևով, և ամեն մի սերունդ իրավունք ունի ձևակերպելու իր մեկնաբանությունները, ոչ միայն իրավունք ունի, նույնիսկ պարտավոր է այդպես վարվելու, քանզի նորովի և անհապաղ պատասխանի կարիք ունեցող խնդիրներ են ծագում: Մենք պարտավոր ենք իմանալու, թե մեր այսօրվա հոգսերն ու ցավերը ինչպիսի կապ ունեն անցյալի հետ և պետք է հասկանանք այն ուղին, որով պիտի հասնենք այդ խնդիրների լուծմանը: Եթե ռացիոնալ ու ազնիվ մեթոդներով դա չի արվում, ապա ծագում են, ըստ Պոպերի, հիստորիցիստական մեկնաբանություններ: Ստացվում է, որ հիստորիցիստը պատմությունը իր ուզած ձևով է մեկնաբանում, որի իրավունքը նա չունի: Պոպերը նման մոտեցումը պատկերավոր ձևով մեկնաբանում է հետևյալ կերպ, եթե ճշմարիտ պատմաբանը լուսարծակը ուղղում է մեր անցյալին, որի անդրադարձը կլուսավորի ներկան, հիստորիցիստը լուսարծակը ուղղում է մեր աչքերին, այս դեպքում կուրանում ենք և շրջապատը չենք տեսնում, կամ էլ վատ ենք տեսնում: Հիստորիցիստը չի հասկանում, որ պատմական փաստերը ընտրողները ու կարգավորողները հենց մենք ենք, այլ համոզված է, որ «հենց ինքը՝ պատմությունը» կամ էլ «մարդկության պատմությունն» է, որ իր ներհուն օրենքներով որոշում է մեր բախտը: Հիստորիցիստը փորձում է պատմության մեջ իմաստ տեսնել և համոզված է, որ հենց ինքն է կոչված այդ իմաստը բացելու:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Կ. Պոպեր**, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ.1, Եր., 2001թ.:
2. **Կ. Պոպեր**, Բաց հասարակությունը և նրա թշնամիները, հ. 2, Եր., 2005թ.:
3. **Է. Կասիրեր**, «Էսսե մարդու մասին», Եր., 2010:

ИСТОРИЦИЗМ ГЕГЕЛЯ И К. МАРКСА ПО К. ПОПЕРУ

Г. Г. Каджоян

Работа посвящена анализу взглядов К. Поппера.

В своем труде „Открытое общество и его враги“ К. Поппер критикует Платона, Гегеля и Маркса и обвиняет их в историзме. Истористы - это те мыслители, которые уверены, что они могут предсказывать ход истории. А между тем, Поппер считает это порочной практикой и считает, что историст комментирует ход истории по-своему, права которого он не имеет.

HISTORICISM OF HEGEL AND MARX BY K. POPPER

H. G. Ghajoyan

In the work “ The Open Society and its Enemies” K. Popper criticizes Plato, Hegel and Marx blaming them on historicism.

Historicists are thinkers who are convinced of having the power to foresee the flow of history in time, while Popper considers it as a vicious practice and finds that a historicist simply comments on the flow of history the way he wants without having the right to do that.